

3762

Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՍՏԱԼԻՆԸ

ՅԵՎ

Կ Ա Ր Մ Ի Ր Բ Ա Ն Ա Կ Ը

ՅԿ 36

Կ-90

ՀԱՅԿՈՒՍՏՐԱՏ • 1938 • ՅԵՐԵՎԱՆ

3K36 ^{սր.}
4-90

2 8 JUN 2005

1 DEC 2009

Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՍՏԱԼԻՆԸ

ՅԵՎ.

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

12 AUG 2013

3762



561238

К. Е. ВОРОШИЛОВ
СТАЛИН И КРАСНАЯ АРМИЯ
Армпартиздат, Ереван, 1938



Մեր պատմութեան խաղաղ շինարարական շրջանը լեցուն է խոշորագույն նշանակութիւն ունեցող դեպքերով: Վերջին տարիներին ընթացքում իսկապես հոսեցին վճռական թեզեր, այլ ջրի ու կիրանոսներ: Մեր շուրջը տեղի ունեցան խոշոր փոփոխութիւններ, մեր հեռանկարներն այլ կերպ պատկերացան, միանգամայն շուտ յեկան հանրաճանաչ մասշտաբներն ու ծախարհերը: Այս բոլոր դեպքերի հետ անխզելիորեն կապված է ընկեր Ստալինի հեղափոխական հարուստ ու բազմակողմանի գործունէութիւնը: Վերջին հինգ-վեց տարվա ընթացքում ընկեր Ստալինը կանգնած էր ծավալվող ու ազդակահույց պայքարի Փոկուսում: Միմիայն այս հանգամանքներով հենց կարելի յէ բացատրել, վոր ընկեր Ստալինի՝ վորպէս քաղաքացիական պատերազմի հաղթանակների ամենից աչքի ընկնող կազմակերպիչներից մեկի նշանակութիւնը վորոշ չափով սքողված էր և դեռևս չէր ստացել արժանի գնահատականը:

Այսօր, մեր բարեկամի հիանամյակի օրը, յես կամենում եմ թեկուզ մասամբ լրացնել այդ բացը¹:

Հասկանալի յէ, լրագրական հոգվածում յես ամենից ավելի քիչ եմ հավակնում տալու ընկեր Ստալինի ռազմական աշխատանքի լիակատար բնութագիրը: Յես կամենում եմ միայն փորձել թարմացնելու ընկերների հիշողութեան մեջ վճռահեռու անցյալի միջանի փաստեր, հրապարակել սակավ հայտնի միջանի փաստաթղթեր, վորպէսզի փաստերի պարզ վկայութեամբ մատնանշեմ այն իրոք բացառիկ դերը, վոր խաղում էր ընկեր Ստալինը քաղաքացիական պատերազմի ըրված մոմենտներին:

1918—1920 թ.թ. ժամանակաշրջանում ընկեր Ստալինը հանդիսանում էր, թերևս, այն միակ մարդը, վորին Կենտրոնական կոմիտեն մարտական մի Ֆրոնտից մյուսն էր դրում, ընտրելով

¹ Ներկա հոգվածն ընկեր Վորոշիլովը գրել է ընկեր Ստալինի ծննդյան հիանամյակի առթիվ:—Խմբ.:

հեղափոխութեան համար ամենից ավելի վտանգավոր, ամենից ավելի ահաւոր տեղերը: Այնտեղ, վորտեղ համեմատաբար հանգիստ ու բարեհաջող եր, վորտեղ մենք հաջողութեաններ ելինք ունենում, — այնտեղ Ստալինը չէր յերևում: Սակայն այնտեղ, վորտեղ մի ամբողջ շարք պատճառների շնորհիվ կարմիր բանակները ճարճատում ելին, վորտեղ հակահեղափոխական ուժերը, ծավալելով իրենց հաջողութեանները, սպառնում ելին խորհրդային իշխանութեան գոյութեանն իսկ, վորտեղ շփոթութեանն ու պանիկան կարող ելին ուղած դրոպելին փոխարկվել անճարակութեան, կատաստրոֆայի, — այնտեղ հայտնվում եր ընկեր Ստալինը: Նա ամբողջ գիշերներ չէր քնում, նա կազմակերպում եր, նա ղեկավարութեանը վերցնում եր իր ամուր ձեռքերի մեջ, նա ջարդում եր, անխնա յեր և — բեկում եր ստեղծում, իրադրութեանն առողջացնում եր: Ինքն ընկեր Ստալինն այդ մասին գրում եր 1919 թ. ԿԿ-ին ուղղած նամակներից մեկում, ասելով, վոր «իրեն դարձնում են ուղղական գերատեսչութեան ակոսները մաքրելու մասնագետ»:



ՅԱՐԻՑԻՆ

Իր ուղղական աշխատանքն ընկեր Ստալինն սկսել է Յարիցինի Փրոնտից, և բավականին պատահական կերպով: 1918 թ. հունիսի սկզբին ընկեր Ստալինը կարմիր-բանակայինների մի ջոկատի հետ և յերկու ավտորոնեվիկով ուղևորվում է Յարիցին՝ վորպես Ռուսաստանի հարավի պարենավորման ամբողջ գործի ղեկավար: Յարիցինում նա հանդիպում է աներևակայելի քասսի վո՛չ միայն խորհրդային, արհեստակցական և կուսակցական կազմակերպութեաններում, այլև ե՛լ ավելի մեծ խառնաշփոթութեան ու խառնափնթորութեան՝ ուղղական հրամանատարութեան որդաններում: Ընկեր Ստալինը յուրաքանչյուր քայլափոխում հանդիպում է ընդհանուր բնույթ կրող այնպիսի արգելքների, վորոնք խանգարում ելին նրան իրագործել իր անմիջական խնդիրը: Այդ արգելքներն ամենից առաջ պայմանավորվում ելին կազակների արագորեն աճող հակահեղափոխութեամբ, վորն այդ ժամանակ առատ ոգնութեան եր ստանում Ուկրաինան գրավող գերմանական ոկուպանտներից: Կազակների հակահեղափոխական բանդաները շուտով գրավում են Յարիցինին մերձակա մի շարք կետեր և գրանով իսկ վո՛չ միայն ձախողում են սովահար Մոսկվայի ու Լենինգրադի համար պլանաչափ կերպով հաց մթերելու հնարավորութեանը, այլև Յարիցինի համար ևս ստեղծում են վերին աստիճանի վտանգավոր դրութեան:

Գործն այդ ժամանակ ավելի լավ չէ նաև այլ վայրերում: Մոսկվայում տեղի յե ունենում ձախ-եսերական ապստամբութեան, արևելքում դավաճանում է Մուրավյովը, Ուրալում ծավալվում ու ամբարնդվում է չեխոսլովակյան հակահեղափոխութեանը, ծայրագույն հարավում — գաղտագողի կերպով Բազվին են մոտենում անգլիացիները: Ամեն ինչ այրվում է կրակե ողակի մեջ: Հեղափոխութեանը խոշորագույն փորձութեաններ է ապրում: Հեռագիր հեռագրի հետևից հեռագրալարերով թռչում են

Լենինից ընկեր Ստալինին Յարիցին ու հակառակ ուղղությամբ: Լենինը նախագրուչացնում է վտանգների մասին, խրախուսում է, պահանջում է վճռական միջոցներ: Յարիցինի դրուժյունը խոշոր նշանակություն է ձեռք բերում: Դոնի վրա ապստամբություն ծագելու և Յարիցինը կորցնելու դեպքում մենք ռիսկ ենք անում կորցնելու ամբողջ արտադրողական հացառատ Հյուսիսային Կովկասը: Յեվ ընկեր Ստալինն այս բանը վորոշակիորեն հասկանում է: Վորպես փորձված հեղափոխական նա շուտով գալիս է այն համոզմանը, վոր իր աշխատանքը վորևէ միտք կունենա միայն այն պայմանով, յեթե նա կարողանա ազդել ռազմական հրամանատարություն վրա, վորի դերը տվյալ պայմաններում վճռողական է դառնում:

«Յարիցինից ավելի հարավ գտնվող գիծը դեռևս վերահանգնված չէ»,—գրում է նա Լենինին հուլիսի 7-ի իր յերկտողում, վոր հանձնված է բնորոշ մակագրություն: «Շտապում եմ Ֆրոնտ, գրում եմ միայն գործի մասին»:

«Քշում ու հայհոյում եմ ամենքին, ում պետք է, հուսով եմ՝ շուտով կվերականգնենք: Կարող եք վստահ լինել, վոր չենք խնայի վոչ վոքի—վո՛չ մեզ, վո՛չ ուրիշներին, իսկ հաց այնուամենայնիվ կտանք»:

Յեթե մեր ռազմական «մասնագետները» (կոչկակարեն՝ը) չքնեյին ու դատարկապորտություն չանեյին, դիժը չեր կտրվի և յեթե գիծը վերականգնվի, ապա այդ կլինի վո՛չ թե շնորհիվ զինվորականների, այլ հակառակ նրանց»:

Յեվ ապա, պատասխանելով Լենինի անհանդստությունը՝ Յարիցինում ձախ եսերների հնարավոր յելույթի առթիվ, նա գրում է կարճառոտ, սակայն հաստատուն և սրբող կերպով.

«Ինչ վերաբերում է հիստերիկներին, հավատացած յեղեք, մեր ձեռքը չի դողա, թշնամիների հետ թշնամաբար կգործենք»:

Ավելի լավ զննելով ռազմական ապարատը, ընկեր Ստալինը համոզվում է, վոր այդ ապարատը միանգամայն անճարակ է, իսկ իր վորոշ մասով՝ նաև ուղղակի ցանկություն չունի լիտիացող հակահեղափոխությանը հակահարված տալու գործը կազմակերպելու:

Յեվ արդեն 1918 թ. հուլիսի 11-ին ընկեր Ստալինը հեռագրում է Լենինին.

«Իրոժը բարդանում է նրանով, վոր Հյուսիս-կովկասյան ոկրուզի շտաբը հակահեղափոխության դեմ մղվող պայքարի

պայմաններին միանգամայն չհարմարեցված հանդիսացավ: Բանը վո՛չ միայն նրանումն է, վոր մեր «մասնագետները» հոգեբանորեն անընդունակ են հակահեղափոխության դեմ վճռական պատերազմ մղելու, այլ նաև նրանում, վոր նրանք վորպես լուկ «գծագրեր դժել» և ձևափոխման պլաններ տալ իմացող «շտաբային» աշխատավորներ, բացարձակապես անտարբեր են դեպի ոպերատիվ գործողություններ... և ընդհանրապես իրենց գրում են վորպես կողմնակի անձեր, հյուրեր: Զինկոմները չկարողացան լրացնել բացը...»:

Ընկեր Ստալինն այս կործանիչ բնութագրությունը չի սահմանափակվում. նույն այդ գրության մեջ նա իր համար իրական հետևություն է անում.

«Անտարբեր նայել այն բանին, յերբ Կալինինի (այն ժամանակվա հրամանատարը Հյուսիսային Կովկասում:—Վ.) Ֆրոնտը կտրված է հայթայթման կետից, իսկ հյուսիսը՝ հացահատիկային շրջանից, ինձ իրավունք չեմ համարում: Յես կուղղեմ այս և շատ ուրիշ թերություններ տեղերում, յես ձեռք եմ առնում մի շարք միջոցներ և ձեռք կառնեմ ընդհուպ մինչև գործը խորտակող պաշտոնյաներին ու հրամանատարներին հեռացնելը, չնայելով ձևական դժվարություններին, վորպիսիներն անհրաժեշտության դեպքում կջարդեմ: Ընդամին հասկանալի յե, վոր բոլոր բարձրագույն հիմնարկությունների առջև կրելիք ամբողջ պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա»:

Իրադրությունն ավելի ու ավելի ըարվում էր: Ընկեր Ստալինը հսկայական եներդիս յե ծավալում և ամենակարճ ժամանակի ընթացքում պարենալորման գործի արտակարգ լիազորից վոխարկվում է Յարիցինի Ֆրոնտի բոլոր կարմիր ուժերի փաստական դեկավարի: Այս դրությունն իր ձևակերպումն է ստանում Սոսկվայում, և ընկեր Ստալինի վրա դրվում են հետևյալ խընդիրները.

«Կարգ հաստատել, ջոկատները միավորել կանոնավոր գործատերի մեջ, սահմանել ճիշտ հրամանատարություն, հեռացնելով բոլոր չենթարկվողներին» (Հանրապետության ՌՂԾ-ի հեռագրից հետևյալ մակագրությամբ. «Սույն հեռագիրն ուղարկվում է Լենինի հետ համաձայնեցվելուց հետո»):

Այդ ժամանակ Յարիցինին մոտեցան ուկրաինական հեղափոխական բանակների մնացորդները, վորոնք դերմանական գործերի ճնշման տակ նահանջում էյին Դոնի անապատներով:

Ընկեր Ստալինի գլխավորութեամբ ստեղծվում է Հեղափոխական ուղիական խորհուրդ, վերը ձեռնարկում է կանոնավոր բանակի կազմակերպմանը: Ընկեր Ստալինի յեռուստի բնավորութունը, նրա յեռանդն ու կամքը արին այն, ինչը դեռ յերեկ անհնար էր թվում: Ամենակարճ ժամանակի ընթացքում ստեղծվում են գիվիդիաներ, բրիգադներ ու գնդեր: Շտաբը, հայթայթման որդաններն ու ամբողջ թիկունքը ամենաարժատական կերպով մաքրվում են հակահեղափոխական ու թշնամի տարրերից: Խորհրդային ու կուսակցական ապարատը բարելավվում ու կարգի յե բերվում: Հին բուլլետիկները ու հեղափոխական բանվորները մի խումբ միավորվում է ընկեր Ստալինի շուրջը, և անճարակ շտաբի փոխարեն հարավում, հակահեղափոխական Դոնի դարպասների մոտ, աճում է բուլլետիկյան կարմիր մի ամբողջ:

Յարիցինն այդ ժամանակաշրջանում լիքն էր ամեն յերանդի հակահեղափոխականներով, աջ էսերներից ու տեռորիստներից սկսած մինչև իսկական միապետականները: Մինչև ընկեր Ստալինի հայտնվելը և Ուկրաինայից հեղափոխական ջոկատների գալը բոլոր այս պարոններն իրենց գրեթե ազատ էյին դրում և ապրում էյին՝ սպասելով ավելի լավ որերի: Ճրոնտում կարմիր ուժերի վերակազմումն ապահովելու համար հարկավոր էր յերկաթյա, անխնա ավյով մաքրել թիկունքը: Ռազմա-հեղափոխական խորհուրդը ընկեր Ստալինի գլխավորութեամբ ստեղծում է հատուկ Չեկա և նրա վրա յե դնում Յարիցինը հակահեղափոխությունից մաքրելու պարտականությունը:

Թշնամու վկայությունը յերբեմն արժեքավոր ու հետաքրքիր է լինում: Ահա թե սպիտակ-գվարդիական «ДОНСКАЯ ВОЛНА» ժուռնալի 1919 թ. փետրվարի 3-ի համարում ինչպես է մեզ դավաճանած և կրասնովականների մոտ փախած գնդապետ Նոսովիչը (բանակի ոպերատիվ վարչության նախկին պետը) նկարագրում այդ ժամանակաշրջանն ու ընկեր Ստալինի դերը:

«Ստալինի գլխավոր դերը հյուսիսային նահանգներին պարենավորում հայթայթելն էր, և այդ խնդիրն իրագործելու համար նա ոժտված էր անսահման լիազորություններով...»

Գրչապի-Յարիցին գիծը վերջնականորեն կտրված էր: Պաշար ստանալու և կապ պահպանելու համար հյուսիսում միայն մի հնարավորություն էր մնացել. դա—Վոլգան էր: Հարավում ևս, կամավորների կողմից Տիխորեցկայան գրավելուց հետո, դրությունը վերին աստիճանի խախտվեց: Իսկ Ստալինի համար, վորն իր պա-

շարները քաղում էր բացառապես Ստալինայուլի նահանգից, այդպիսի դրությունը սահմանակցվում էր նրա միսիան հարավում վերջանալու հետ: Սակայն այնպիսի մարդու, վերպիսին Ստալինն էր, քստ յերեկութին այդպիսի մարդու կանոնների մեջ չէր մտնում իր մի անգամ սկսած դործից հեռանալ: Պետք է խոստովանվել, վոր նրա յեռանդին կարող է նախանձել հին աղվինիստորատորներից յուրաքանչյուրը, իսկ դործին ու հանգամանքներին հարմարվելու նրա ընդունակությունից պիտի խրատ առնեն շատերը:

Աստիճանաբար, այն չափով, վոր չափով վոր նա մնում էր առանց դործի, ավելի ճիշտը՝ իր անմիջական խնդրի փոքրանալուն գուղընթաց, Ստալինն սկսեց մտնել քաղաքի վարչության բոլոր բաժինները, և գլխավորապես Յարիցինի պաշտպանության լայն խնդիրների մեջ, մասնավորապես նաև ամբողջ կովկասյան, այսպես կոչված հեղափոխական Ֆրոնտի խնդիրների մեջ՝ ընդհանրապես:»

Յեկ պապ, անցնելով Յարիցինում տիրող դրության բնութագրմանը, Նոսովիչը գրում է. «Այդ ժամանակ Յարիցինում մըթնորոտն ընդհանրապես խտացել էր: Յարիցինի Արտակարգ հանձնաժողովն աշխատում էր լրիվ տեմպով: Որ չէր անցնում, վոր քստ յերեկութին ամենահուսալի և ամենազաղտնի տեղերում գանաղան դավադրություններ չբացվէյին: Գաղաքի բոլոր բանաերը լցվել էյին...»

Կուլիլ Ֆրոնտում հասավ ծայրահեղ լարվածության...»

Այս բոլորի գլխավոր շարժիչը և գլխավոր անորինողը հուլիսի 20-ից հանդիսացավ Ստալինը: Յերկրամասի կառավարման ներկա կառուցվածքի անհարմարության և դործի համար անհամապատասխան լինելու մասին կենտրոնի հետ ուղիղ հեռազրաբարով ունեցած հասարակ խոսակցությունն այն հետևանքն ունեցավ, վոր Մոսկվան ուղիղ հեռազրաբարով հրաման տվեց, վորով Ստալինը կարգվում էր ամբողջ ուղղակիան... և քաղաքացիական վարչության գլուխ...»:

Սակայն քիչ հետո Նոսովիչն ինքը խոստովանում է, թե վորքան հիմք ունեյին այդ ռեպրեսիաները: Ահա թե նա ինչ է գրում Յարիցինի հակահեղափոխական կազմակերպությունների մասին.

«Այդ ժամանակ տեղական հակահեղափոխական կազմակերպությունը ևս, վոր կանգնած էր սահմանադիր ժողովի պատՖորմի վրա, նշանակալից չափով ամբապնդվեց և, Մոսկվայից դրամ-

ատանալով, պատրաստվում եր ակտիվ յեւույթի՝ Յարիցիւնն ա-
զատելու գործում Դոնի կազակներին ոգնելու համար:

Շատ ահաստ, վոր այդ կազակերպութեան՝ Մոսկվայից յե-
կած գլուխը՝ ինժեներ Ալեքսեյեւն ու իր յերկու վորդիները քիչ
եյին ծանոթ իսկական իրադրութեանը, և շնորհիվ սխալ կազմված
պլանի, վոր հիմնված եր այն սերբիական բատալիոնի ակտիվորեն
հանդես յեկողներին շարքերի մեջ ներդրուելու վրա, վորը ծա-
ռայում եր բոլշևիկներին՝ չեկային կից, — կազակերպութեանը
հայտաբերվեց...

Ստալինի ռեզոլուցիան կարճ եր. «Գնդակահարել»: Ինժեներ
Ալեքսեյեւը, նրա յերկու վորդիները, իսկ սրանց հետ մեկտեղ
բախականաչափ սպաներ, վորոնք մասամբ դանդաղ եյին կազմա-
կերպութեան մեջ, իսկ մասամբ ել կասկածվում եյին նրանում
մասնակցելու մեջ, չեկայի կողմից ձերբակալվեցին և անհատադ,
առանց վորևէ դատի գնդակահարվեցին»:

Այնուհետև անցնելով թիկունքը (Հյուսիս-կովկասյան ոկրու-
զի շտաբն ու նրա հիմնարկները) ջախջախելուն ու սպիտակ-գվար-
գլիականներից մաքրելուն, Նոսովիչը գրում ե.

«Այս ցրման բնորոշ առանձնահատկութեանը Ստալինի վերա-
բերմունքն եր ղեպի կենտրոնից յեկող ղեկավար հեռագիրները:
Յերբ Տրոցկին, իր կողմից այնպիսի դժվարութեամբ կարգավոր-
ած ոկրուզների վարչութեանները քարուքանդ անելուց մտահոգ-
ված, հեռագիր ուղարկեց շտաբն ու կոմիսարիատը նախկին պայ-
մաններում թողնելու և նրանց աշխատելու հնարավորութեան տա-
լու անհրաժեշտութեան մասին, այդ Ստալինը հեռագրի վրա հե-
տևյալ կատեգորիկ և բազմանշանակալից մակադրութեանն արեց.

«Ուշադրութեան չառնել»:

Այդպես ել այդ հեռագիրն ուշադրութեան չառնել, իսկ ամ-
բողջ հրետանային վարչութեանը և շտաբայինի մի մասը շարու-
նակում ե նստած մնալ բարձայի վրա Յարիցիւնում»:

Յարիցիւնի ֆիզիոնոմիան կարճ ժամանակի ընթացքում մի-
անգամայն անճանաչելի դարձաւ: Այն քաղաքը, վորտեղ քիչ ա-
ռաջ այդիներում թնդում եր յերաժշտութեանը, վորտեղ փա-
խած-հավաքված բուրժուազիան սպիտակ սպայութեան հետ մեկ-
տեղ բացահայտ կերպով խմբերով թափառում եր փողոցներում,
այդ քաղաքը վեր ե անվում կարմիր ռազմական լազերի, վոր-
տեղ ամենախիստ կարգն ու ռազմական ղեկցիւլինան իշխում են
ամեն բանի վրա: Թիկունքի այս ամբողջումը անմիջապես իր

բարերար ազդեցութեանն ե ունենում Փրոնտում մարտնչող մեր
գնդերի տրամադրութեան վրա: Հրամանատարական ու քաղաքա-
կան կազմը և ամբողջ կարմիր-բանակային մասսան սկսում են
զգալ, վոր իրենց կառավարում ե մի ուժեղ հեղափոխական ձեռք,
վորը պայքարը վարում ե հանուն բանվոր-երի ու գյուղացիների
չահերի, առանց խնայելու պատժելով ամենքին, ով հանդիպում
ե այդ պայքարի ճանապարհին:

Ընկեր Ստալինի ղեկավարութեանը կարիներով չի սահմա-
նափակվում: Յերբ անհրաժեշտ կարգը սահմանված ե, յերբ վե-
րականընթացում ե հեղափոխական կազմակերպութեանը, նա ուղե-
վորվում ե Փրոնտ, վորն այդ ժամանակ ձգվում եր 600 կմ-ից ա-
վելի յերկարութեամբ: Յեզ պետք եր Ստալին լինել և ունենալ նրա
կազմակերպչական խոշորագույն ընդունակութեանները, վորպես-
զի, առանց ռազմական վորևէ նախապատրաստութեան (ընկեր
Ստալինը յերբեք ղինվորական ծառայութեան մեջ չի յեղել), մարդ
կարողանա այնքան լավ հասկանալ ռազմական հատուկ հարցերը
այն ժամանակվա վերին աստիճանի դժվար իրադրութեան մեջ:

Հիշում եմ, ինչպես այժմ, 1918 թ. ոգոստոսի սկիզբը: Կրաս-
նովյան կազակային զորամասերը հարձակում են գործում Յարի-
ցիւնի վրա, աշխատելով կոնցենտրիկ հարվածով կարմիր գնդերը
նետել Վոլգայի վրա: Շատ որերի ընթացքում կարմիր գործերը
բացառապես Դոնբասի բանվորներից կազմված կոմունիստական
դիվիզիայի ղլխավորութեամբ հետ են մղում լավ կազմակերպված
կազակային զորամասերի բացառիկ ուժեղ գրոհը: Դրանք մեծա-
գույն լարվածութեան որեր եյին: Պետք եր տեսնել ընկեր Ստա-
լինին այդ ժամանակ: Ինչպես միշտ, հանգիստ, խորասուզված իր
մտքերի մեջ, նա տառացիորեն ամբողջ որերով չեւ քնում, իր ա-
մենախնտենսիվ աշխատանքը բաշխելով մարտական դիրքերի և
բանակի շտաբի միջև: Դրութեանը Փրոնտում դառնում եր գրեթե
կատասարդֆիկ: Կրասնովյան զորամասերը Ֆիցիսալաուերովի, Մա-
մոնտովի և ուրիշների հրամանատարութեամբ լավ մտածված մա-
նեվրով նեղում եյին մեր ուժասպառ յեղած, խոշոր կորուստներ
կրած գործերին: Հակառակորդի Փրոնտը, վորը կառուցված եր
պայտածև և իր թեկերով հենվում եր Վոլգային, որեցոր ավելի
ու ավելի յեր սեղմվում: Մենք հետ քաշվելու ճանապարհներ չու-
նեյինք: Սակայն Ստալինն այդ ճանապարհների մասին չեւ ել
հոգում: Նա համակված եր մի գիտակցութեամբ, մի միակ մըտ-
քով—հաղթել, ջարդել թշնամուն ինչ ել վոր լինի: Յեզ Ստալինի

այդ անխորտակելի կամքը փոխանցվում էր նրա ամենամերձա-
վոր զինակիցներին և, չնայելով դրեթե անելանելի դրուժյանը,
վոչ վոք չէր յերկմտում հաղթանակի նկատմամբ:

Յեվ մենք հաղթեցինք: Ձախջախված թշնամին շարտվեց հե-
տու դեպի Դոն:

★

ՊԵՐՄ

1918 թ. վերջին արևելյան Ֆրոնտում և մանավանդ Պերմը
հանձնելու ստիպված III բանակի տեղամասում ստեղծվեց կատա-
ստրոֆիկ դրուժյուն: Հակառակորդի կողմից կիսաողակով շրջա-
պատված այդ բանակը նոյեմբերի վերջին վերջնականապես բա-
րոյալքված էր: Վեցամսյա անհերթափոխ մարտերի հետևանքով,
քիչ թե շատ վտառակի ռեզերվները բացակայությամբ, թիկունքի
չապահովվածությամբ, շատ վատ կարգավորված պարենավոր-
մամբ (29-րդ դիվիզիան 5 որ պաշտպանվում էր տառացիորեն ա-
ռանց մի կտոր հացի), 35 աստիճան սառնամանիքի առկայու-
թյամբ, ճանապարհների լիակատար բացակայությամբ, Ֆրոնտի
չափազանց շատ յերկարածղվածությամբ (400 կիլոմետրից ավե-
լի), թույլ շտաբով III բանակը անկարող հանդիսացավ դիմանա-
լու հակառակորդի դերազանց ուժերի դրոհին:

Վորպեսզի անմխիթար պատկերը լիակատար լինի, պետք է
ավելացնել նաև նախկին սպաներից կազմված հրամանատարական
կազմի մասսայական դավաճանությունները, ամբողջ զնդերով դե-
րի տալը՝ վորպես համալրումների դատակարգային վատ ընտրու-
թյան հետևանք և միանգամայն անպետք հրամանատարությունը:
Այսպիսի պայմաններում III բանակը վերջնականապես քայքայվեց,
անկարգ կերպով նահանջում էր, 20 որում 300 կմ. անցնելով և
այդ որերին կորցնելով 18 հազ. մարտիկ, տասնյակ հրանոթներ,
հարյուրավոր զնդացիներ և այլն: Հակառակորդն սկսեց արագո-
րեն առաջ շարժվել, իրական սպառնալիք ստեղծելով Վյատկայի
և ամբողջ արևելյան Ֆրոնտի համար:

Այս դեպքերը ԿԿ-ի առջև հարց դրին կատաստրոֆայի պատ-
ճառները պարզելու և III բանակի զորամասերն անմխիթապես կարգի
քերելու անհրաժեշտության մասին: Ո՞ւմ ուղարկել այս դժվա-
րագույն խնդիրն իրագործելու համար: Յեվ լենինը ՌՌՀԽ-ի այս
ժամանակվա նախադահին հեռադրում է.

«Պերմի մոտերքից կուսակցական մի շարք հաղորդագրու-
թյուններ կան բանակի կատաստրոֆիկ դրուժյան մասին և հար-
բեցողության մասին: Յես մտածում եյի ուղարկել Ստալինին—
վախենում եմ, վոր Սմիլգան փախուկ կլինի դեպի... , վորը
նույնպես, ասում են, խմում է և ի վիճակի չէ կարգը վերահաս-
տատելու»:

ԿԿ-ն վորոշում է ընդունում.

«Նշանակել կուսակցական քննիչ հանձնաժողով՝ ԿԿ-ի անդամ-
ներ Ձերժինսկու և Ստալինի անդամությամբ, մանրամասնորեն
քննելու համար Պերմը հանձնելու, ուրալյան Ֆրոնտում կրած վեր-
ջին պարտությունների պատճառները, ինչպես նաև պարզելու վերը
մատնանշած յերևույթներին ընթացակցող բոլոր հանգամանքները:
ԿԿ-ն հանձնաժողովին թույլատրում է ձեռք առնել բոլոր անհրա-
ժեշտ միջոցները շուտափույթ կերպով վերականգնելու համար
ինչպես կուսակցական, նույնպես և խորհրդային աշխատանքը III
և II բանակների ամբողջ շրջանում» (Սվերդլովի № 00079 հեռա-
գիրը):

Այս վորոշումը կարծես թե սահմանափակում է ընկերներ
Ստալինի և Ձերժինսկու Փոնկիցիաները «Պերմը հանձնելու և ու-
րալյան Ֆրոնտում կրած վերջին պարտությունների պատճառների
քննությամբ»: Սակայն ընկեր Ստալինն իր «կուսակցական-քննչա-
կան» աշխատանքի ծանուցության կենտրոնը փոխադրում է դրու-
թյունը վերականգնելու, Ֆրոնտն ամրացնելու և այլ իրական մի-
ջոցներ ձեռք առնելու վրա: Հանձնաժողովի աշխատանքի ար-
դյունքների մասին 1919 թ. հունվարի 5-ին Լենինին ուղարկած ա-
ռաջին իսկ հեռագրի մեջ Ստալինը վոչ մի խոսք չի ասում «կա-
տաստրոֆայի պատճառների մասին», այլ տեղից դնում է այն
հարցը, թե ինչ պետք է անել բանակը փրկելու համար: Ահա այդ
հեռագիրը.

«Պաշտպանության խորհրդի նախագահ ընկ. Լենինին:

Քննությունն սկսված է: Քննության ընթացքի մասին կհա-
ղորդենք զուգընթացաբար: Առայժմ կարևոր ենք համարում հայտ-
նել ձեզ III բանակի մի անհետաձգելի կարիքի մասին: Բանը նրա-
նումն է, վոր III բանակից (30 հազ. մարդուց այլելի) մնացել են
միմիայն 11 հազ. հողմած, զզգված զինվորներ, վորոնք հաղիվ
են պահում հակառակորդի ճնշումը: Գլխավորի ուղարկած զորա-
մասերն անհուսալի յեն, մասամբ նույնիսկ թշնամաբար են տրա-
մադրված դեպի մեզ և կարիք ունեն լուրջ ֆիլտրովկայի: III բա-

նակի մնացորդները փրկելու և հակառակորդի մինչև Վյատկա ա-
րագ կերպով շարժվելը կանխելու համար (ըստ բոլոր տվյալների,
վոր ստացված են Ֆրոնտի և III բանակի հրամանատարական կազ-
մից, այդ վտանգը միանշամայն իրական է) բացառապես անհրա-
ժեշտ է շուտապ կարգավ Ռուսաստանից գոնե յերեք միանգամայն
հուսալի զուեղ փոխադրել բանակի հրամանատարի տրամադրու-
թյան տակ: Յեռանդադին խնդրում ենք այս ուղղությամբ ճնշում
գործադրել ռազմական համապատասխան հիմնարկների վրա:
Կրկնում ենք. առանց այսպիսի միջոցառման Վյատկային սպառ-
նում է Պերմի վիճակը, այսպես է գործին մասնակից ընկերների
ընդհանուր կարծիքը, վորին մենք միանում ենք մեր ունեցած բո-
լոր տվյալների հիման վրա: Ստալին, Ձերժինսկի: 5/1—19. Վյատ-
կա»:

Յեվ միայն 1919 թ. հունվարի 13-ին է ընկեր Ստալինն ընկ.
Ձերժինսկու հետ միասին ուղարկում իր նախնական համառոտ
տեղեկագիրը «կատաստրոֆայի պատճառների» մասին, վորոնք
հիմնականում հանդում էյին հետևյալին. բանակի հոգնածու-
թյունն ու ուժասպառությունը հակառակորդի հարձակման մոմեն-
տին, մեղանում այդ մոմենտին ռեզերվների բացակայությունը,
շտարի կտրվածությունը բանակից, բանակի հրամանատարի ան-
տեսակարարությունը, Ֆրոնտը անթույլատրելի հանցավոր ձևով
դեկավարելը Հանրապետության Ռազմահեղխորհրդի կողմից, վորը
Ֆրոնտը ջլատում էր իր հակասական դիրեկտիվներով և Ֆրոն-
տից խլում էր III բանակին շտապ ոգնության դայու ամեն մի
հնարավորություն, թիկունքից ուղարկված ոգնական ուժերի
անհուսալիությունը, վորը բացատրվում է համալրման հին ձևե-
րով, թիկունքի բացարձակ անկայունությունը, վորը բացատրը-
վում է խորհրդային ու կուսակցական կազմակերպությունների
լիակատար անճարակությամբ ու անձեռնհասությամբ:

Միաժամանակ ընկեր Ստալինը նշում է իրեն հատուկ ա-
րագությամբ ու հաստատակամությամբ հենց տեղնուտեղը կեն-
սագործում է III բանակի մարտունակությունը բարձրացնելու վե-
րաբերյալ մի շարք պրակտիկ միջոցառումներ:

«Առ 15-ն հունվարի,—կարդում ենք մենք Պաշտպանության
խորհրդին ուղարկած նրա տեղեկագրի մեջ,—Ֆրոնտ է ուղարկ-
ված 1200 վստահելի սվին ու թուր. մի որ հետո — հեծելազորի
յերկու եսկադրոն. 20-ին ուղարկված է 3-րդ բրիգադի 62-րդ
դուեղը (նախորդը խնամքով ֆիլտրացիայի յենթարկված): Այս



գործաձանձուրը հնարավորութիւն տվին կանգնեցնելու հակառակորդի հարձակումը, կոտորեցին III բանակի տրամադրութիւնը և բաց արին մեր առաջժամ հաջող հարձակումը Պերմի վրա: Բանակի թիկունքում տեղի յե ունենում խորհրդային ու կուսակցական հիմնարկների լուրջ գտում: Վյատկայում և գալառական քաղաքներում կազմակերպված են հեղափոխական կոմիտեներ: Սկսված է ու շարունակվում է հեղափոխական ամուր կազմակերպութիւնների հիմնումը գյուղում: Կուսակցական ու խորհրդային ամբողջ աշխատանքը վերակառուցվում է նոր ձևով: Զտված ու բարեփոխված է ռազմական վերահսկողութիւնը: Զտված ու կուսակցական նոր աշխատողներով համալրված է նահանգական արտակարգ հանձնաժողովը: Կարգավորված է Վյատկայի հանգուցի բեռնաթափումը»... և այլն:

Այս բոլոր միջոցառումների հետևանքով վո՛չ միայն կանգնեցվեց հակառակորդի հետագա առաջխաղացումը, այլև 1919 թվի հունվարին արևելյան Փրոնտն անցավ հարձակման, և մեր աջ թևում գրավվեց Ուրալսկը:

Ահա թե ընկեր Ստալինն ինչպես հասկացավ ու իրագործեց «կատաստրոֆայի պատճառները քննելու» իր խնդիրը: Քննեց, բացահայտեց այդ պատճառները և հենց տեղնուտեղը, իր ուժերով, վերացրեց դրանք ու անհրաժեշտ բեկումը կազմակերպեց:



ՊԵՏՐՈԳՐԱԴ

1919 թ. գարնանը գեներալ Յուզենիչի սպիտակ-զվարդիական բանակը, կատարելով Կոլչակի կողմից դրված խնդիրը, այն է՝ «տիրանալ Պետրոգրադին» և արևելյան Փրոնտից հեղափոխական գործերին քաշել դեպի իրեն՝ սպիտակ էսսենցիներին, սպիտակ Ֆիններին և անդլաական նավատորմի ոգնությամբ, — անցավ անըսպասելի հարձակման և Պետրոգրադի համար իրական սպառնալիք ստեղծեց: Դրության լրջութիւնը սաստկացավ նաև նրանով, վոր հենց Պետրոգրադում հայտաբերվեցին հակահեղափոխական դավադրութիւններ, վորոնց ղեկավարները, բանից դուրս յեկավ, վոր արևմտյան Փրոնտի շտաբում ՎՊ բանակում և Կրոնշտադտի ծովային բազայում ծառայող ռազմական մասնազետներն էյին: Յուզենիչի կողմից Պետրոգրադի վրա կատարած հարձակմանը զուգահեռ Բուլակ-Բալախովիչը մի շարք հաջողութիւններ ձեռք բերեց Պսկովի ուղղությամբ: Ֆրոնտում սկսվեցին դավաճանութիւնները: Մեր միջանի գնդերն անցան հակառակորդի կողմը. «Կրասնայա գորկա» և «Սերայա լոչադ» ամրոցների ամբողջ կայազորը բացահայտ կերպով դուրս յեկավ ընդդեմ խորհրդային իշխանության: Շփոթութիւնը տիրեց ամբողջ ՎՊ բանակին, Փրոնտը յերերաց, թշնամին մոտենում էր Պետրոգրադին: Պետք էր անհապաղ փրկել դրութիւնը:

Կենտրոնական կոմիտեն այս նպատակի համար դարձյալ ընտրում է ընկեր Ստալինին: Յերեք շաբաթվա ընթացքում ընկեր Ստալինին հաջողվում է բեկում ստեղծել: Զորամասերի թափթրվածութիւնն ու շփոթվածութիւնն արագորեն լիկվիդացիայի յեն յենթարկվում, շտաբները կարգի յեն բերվում, մեկը մյուսի հետևից տեղի յեն ունենում Պիտերի բանվորների ու կոմունիստների մոբիլիզացիաներ, անխնա կերպով վո՛չնչացվում են թշնամիներն ու դավաճանները: Ընկեր Ստալինը խառնվում է ռազմական հրամանատարության օպերատիվ աշխատանքին: Ահա թե նա ինչ է հեռագրում ընկեր Լենինին.

«Կրասնայա գորկայից» անմիջապես հետո լիկվիդացիայի յենթարկված «Սերայա լոչադը», նրանցում հրահրոթները միանգամայն կարգին վիճակում են, տեղի յե ունենում շուտափույթ... (անընթեռնելի յե) ... բոլոր ամբոցները ու բերդերի: Մովային մասնազետները հավատացնում են, վոր ծովի կողմից «Կրասնայա գորկայի» առումը չըջում է ծովային ամբողջ գիտությունը: Ինձ մնում է միայն վողբալ այսպես կոչված գիտության վրա: «Գորկայի» արագ առումը բացատրվում է իմ և ընդհանրապես վոչ-դինսյորականների կողմից ոպերատիվ գործերի մեջ ամենակոպիտ կերպով խառնվելովը, վոր հասնում էր մինչև ծովի և ցամաքի ուժերին տրված հրամանների վերացմանը և մեր սեփական հրամաններն ընդունել տալուն: Իմ պարտքն եմ համարում հայտնել, վոր յես այսուհետև ել պիտի գործեմ այդ ձևով, չնայելով դեպի գիտությունը տածած իմ ամբողջ ակնածությանը: Ստալին»:

Վեց որ հետո ընկեր Ստալինը զեկուցում է Լենինին.

«Մեր գործառնությունը բեկումն սկսվել է: Մի շաբաթվա ընթացքում մեղնում մասնակի կամ խմբակային փախստակումները վոչ մի դեպք տեղի չի ունեցել: Դասայիքները հաղարներով են վերադառնում: Թշամու լազերից դեպի մեր լազերը կատարվող փախստակումները հաճախակի յեն դարձել: Մի շաբաթվա ընթացքում մեզ մոտ են փախստակել 400 մարդ, մեծամասնությունը՝ զենքով: Յերեկ ցերեկով սկսվեց մեր հարձակումը: Թեև խոտացված ոգնությունը դեռևս ստացված չե, սակայն շարունակել կանգնած մնալ նույն գծի վրա, վորի վրա մենք կանգ եյինք առել, չեք կարելի—չափազանց մոտ է Պիտերին: Առայժմ հարձակումը հաջող է ընթանում, սպիտակները փախչում են, մենք այսօր գրավել ենք Կերնովո—Վորոնինո—Սլեպինո—Կասկովո գիծը: Մենք վերցրել ենք զերիններ, յերկու թե ավելի հրահրոթ, ավտոմատներ, փամփուռաներ: Թշամու նավերը չեն յերևում, ըստ յերևութին, վախենում են «Կրասնայա գորկայից», վորն այժմ լիովին մերն է: Շտապ կերպով ուղարկեցեք իմ տրամադրության տակ 2 միլիոն փամփուռա 6-րդ դիվիզիայի համար...»:

Այս յերկու հեռագրերը լիակատար սրտկերացում են տալիս այն վիթխարի ստեղծագործական աշխատանքի մասին, վոր կատարել է ընկեր Ստալինը, լիկվիդացիայի յենթարկելով կարմիր Պիտերի տակ ստեղծված ամենավտանգավոր դրությունը:



ՀԱՐԱՎԱՅԻՆ ՖՐՈՆՏ

1919

թ. աշունը հիշում են ամենքը: Վրա յեր հասնում ամբողջ քաղաքացիական պատերազմի վճռողական, բեկումնային մոմենտը: «Դաշնակիցները» կողմից մատակարարված, նրանց շտաբների կողմից աջակցություն դատած, Դենիկինի սպիտակ-զվարդական հրոսակախմբերը մոտենում եյին Ուրյոլին: Հարավային ամբողջ հսկայական Ֆրոնտը դանդաղ ալիքներով հետ եր գլորվում: Ներսում դրությունը ավելի պակաս ծանր չեք: Պարենային դժվարությունները վերին աստիճանի սրվել եյին: Արդյունաբերությունը կանգ եր առել վառելիքի պակասության պատճառով: Յերկրի ներսում, և մինչև անգամ հենց Մոկվայում, սկսեցին շարժվել հակահեղափոխական տարրերը: Վտանգն սպառնում եր Տուլային, վտանգը կախված եր Մոսկվայի վրա:

Պետք է փրկել դրությունը: Յեվ ԿԿ-ն հարավային Ֆրոնտ է ուղարկում ընկեր Ստալինին՝ վորպես Ռեյս-ի անդամի: Այժմ արդեն կարիք չկա թագցնելու, վոր իր նշանակումից առաջ ընկեր Ստալինը ԿԿ-ի առջև դրեց յերեք գլխավոր պայման. 1) Տրոցկին չպետք է խառնվի հարավային Ֆրոնտի գործերին և այդ Ֆրոնտը սահմանադատող գծերից դենը չպետք է անցնի, 2) հարավային Ֆրոնտից անմիջապես պիտի հետ կանչվեն մի ամբողջ շաբք աշխատողներ, վորոնց ընկեր Ստալինն անպետք եր համարում գործերի մեջ դրությունը վերականգնելու համար, և 3) պետք է անմիջապես հարավային Ֆրոնտ գործուղվեյին նոր աշխատողներ ընկեր Ստալինի ընտրությամբ, վորոնք կարող եյին ի կատար ածել այդ խնդիրը: Այս պայմանները լիովին ընդունվեցին:

Բայց վորպեսզի կարելի լիներ ընդգրկել այդ հսկայական մախիման (Վոլգայից մինչև լեհ-ուկրաինական սահմանը), վորը կոչվում եր հարավային Ֆրոնտ և իր կազմի մեջ հաշվում եր միլիանի հարյուր հազար զորք, պետք եր ճիշտ ոպերատիվ պլան, պետք եր Ֆրոնտին տալ պարզորեն ձևակերպված խնդիր: Այն

ժամանակ կարելի չէր այդ նպատակը դնել զորքերի առջև և վերաբարձավորելու ու լավագույն ուժերը գլխավոր ուղղութիւններէ վրա կենտրոնացնելու միջոցով հարված հասցնել թշնամուն:

Ընկեր Ստալինը Փրոնտում հանդիպում է շատ անորոշ ու ծանր իրադրութեան: Կուրսկ—Ուրյոլ—Տուլա գլխավոր ուղղութեամբ մեզ հարվածում են, արևելյան թևը անճարակ կերպով թրև է դալիս նույն տեղում: Իսկ ինչ վերաբերում է ուղեբառով դիրեկտիվներին, այդ նրան առաջարկում է ձախ թևով, Յարիցինից դեպի Նովորոսիյսկ, Դոնի տափաստանների վրայով, գլխավոր հարված հասցնելու հին (սեպտեմբերյան) պլանը:

«Հարավային Փրոնտի հարձակման հիմնական պլանը մնում է անփոփոխ. հատկապես ամենագլխավոր հարվածը հասցնում է Շորինի հատուկ խումբը, վորի խնդիրն է թշնամուն վոչնչացնելը Դոնում և Կուրսկում»¹:

Ծանոթանալով դրութեանը, ընկեր Ստալինն անմիջապես վորոշում է ընդունում: Նա կատեգորիկ կերպով մերժում է հին պլանը, առաջ է քաշում նոր առաջադրութիւններ և այդպիսիներն առաջարկում է Լենինին հետևյալ դրութեամբ, վորը ինքն իսկ խոսում է իր մասին: Այդ դրութիւնն այնքան հետաքրքիր է, այնքան պարզորոշ է պատկերում ընկեր Ստալինի ստրատեգիական տաղանդը, այնքան բնորոշ է հարցերի դրվածքի հենց իր մշտականութեամբ, վոր մենք ողտակար ենք համարում մեջ բերել այն լրիվ կերպով:

«Սրանից յերկու ամիս առաջ Գլխումը սկզբունքորեն չէր առարկում արևմուտքից դեպի արևելք Դոնեցի ավազանի վրայով հասցնելիք հարվածի դեմ՝ վորպես հիմնական հարվածի: Յեթե նա այնուամենայնիվ չգնաց այդպիսի հարվածի, ապա այն պատճառով, վոր վկայակոչում էր ամառը հարավային զորքերի նահանջի հետևանքով ստացված «ժառանգութիւնը», այսինքն հարավ-արևմտյան Փրոնտի զորքերի տարերայնորեն ստեղծված խմբավորումը, վորի (խմբավորման) վերակառուցումը կտաներ դեպի ժամանակի մեծ կորուստ, դեպի ողուտ Դենիկինի համար... Սակայն այժմ իրադրութիւնն ու ուժերի նրա հետ կապված խմբավորումը հիմնականում փոխվեցին. VIII բանակը (հիմնականը նախկին հարավային Փրոնտում) տեղաշարժեց հարավային Փրոնտի շրջանում և ուղղակի նայում է Դոնեցի ավազանին, Բուդյոննու հեծյալ կորպուսը (մյուս հիմնական ուժը) տեղա-

1 Գլխումի դիրեկտիվից, սեպտեմբեր 1919 թ.:

շարժվեց նույնպես հարավային Փրոնտի շրջանում, ավելացավ նոր ուժ—լատիշական դիվիզիան,—վորը մի ամիս հետո, նորոգվելով, նորից ահավոր ուժ կհանդիսանա Դենիկինի համար... Խոչնչն է ապա ստիպում Գլխումին (ազգակայանին) պաշտպանել հին պլանը: Ըստ յերևութին, միմիայն համառութիւնը, յեթե հաճելի չէ—Փրակցիոնականութիւնը, Հանրապետութեան համար ամենաբուժին ու ամենավատնագլորը, վորը սնուցվում է Գլխումում, սրան կից գտնվող «ստրատեգիական» քաղաղի կողմից... Որեքս Գլխումը Շորինին դիրեկտիվ է տվել հարձակվելու Նովորոսիյսկի վրա Դոնի տափաստանների վրայով մի այնպիսի գծով, վորով մեր ավիատորներին գուցե և հարմար է թուչել, բայց վորով մեր հետևակին ու հրետանուն արդեն միանգամայն անհնար կլինի թափառել: Կարիք էլ չկա ապացուցելու, վոր այդ խելակորույս (յենթադրյալ) արշավանքը մեզ թշնամի միջավայրով, ճանապարհների բացարձակ բացակայութեան պայմաններում մեզ լիակատար կրախ է սպառնում: Դժվար չէ հասկանալ, վոր կազակային ստանիցաների վրա կատարելիք այդ արշավանքը, ինչպես այդ ցույց է տվել վոչ-հեռու անցյալի պրակտիկան, կարող է միմիայն համարվել կազակներին մեր դեմ Դենիկինի շուրջը իրենց ստանիցաները պաշտպանելու համար, կարող է միմիայն ցուցադրել Դենիկինին վորպես Դոնի փրկիչ, կարող է միմիայն կազակների բանակ ստեղծել Դենիկինի համար, այսինքն կարող է միմիայն ուժեղացնել Դենիկինին: Հենց դրա համար էլ անհրաժեշտ է այժմ իսկ, առանց ժամանակ կորցնելու փոխել պրակտիկայի կողմից արդեն իսկ մերժված հին պլանը, փոխաբերելով այդպիսին Ուարկով—Դոնեցի ավազան գծով Ռոստովին հիմնական հարված հասցնելու պլանով. նախ՝ այստեղ մենք կունենանք վոչ թշնամական միջավայր, ընդհակառակը՝ մեզ համար կրող միջավայր, վորը կհնչուացնի մեր առաջխաղացումը. յերկրորդ՝ մենք ստանում ենք յերկաթուղային կարևորագույն ցանց (Դոնեցինը) և այն հիմնական արտերիան, վոր սնում է Դենիկինի բանակին,—վորոնե՛ս—Ռոստով գիծը... Յերրորդ՝ այս առաջխաղացմամբ մենք Դենիկինի բանակը ձեղքում—բաժանում ենք յերկու մասի, վորոնցից կամավորականը թողնում ենք ի կեր Մախնոյին, իսկ կազակային բանակները դնում ենք նրանց թիկունքը շրջանցելու սպառնալիքի տակ. չորրորդ՝ մենք հնարավորութիւն ենք ստանում կազակներին կովեցնելու Դենիկինի հետ, վորը (Դենիկինը) մեր հաջող առաջխաղացման դեպքում կաշխատի կազակային զորամասերը շարժել դեպի արևմուտք, վորին կազակների

մեծամասնութիւնը համաձայն չի լինի... հինգերորդ՝ մենք ածուխ ենք ստանում, իսկ Դենիկինը մնում է առանց ամխի: Այս պլանն ընդունելու գործում հապաղել չի կարելի... Կարճ ասած՝ հին, կյանքի կողմից արդեն մերժված պլանը վոչ մի ղեկավար չպետք է դարձնանք, — դա վտանգավոր է Հանրապետութեան համար, դա անշուշտ կթեթեացնի Դենիկինի դրութիւնը: Այդ պլանը պետք է փոխարինել մի ուրիշով: Հանգամանքներն ու պայմաններն այդ բանի համար վոչ միայն հասունացել են, այլև հրամայողաբար թելադրում են այդպիսի փոխարինում... Առանց դրան իմ աշխատանքը հարապային Ֆրոնտում դառնում է անմիտ, հանցավոր, անպետք, վոր ինձ իրավունք է տալիս կամ, ավելի ճիշտ՝ ինձ պարտադրում է հեռանալ ուր ել վոր լինի, թեկուզ աստանայի մոտ, միայն թե չմնալ հարապային Ֆրոնտում: Ձեր Ստալին»:

Այս փաստաթղթի վերաբերմամբ կոմենտարիաներն ավելորդ են: Ինքնին ուշադրութիւն է դրաւում, թե Ստալինն ինչ չափով է չափում ոպերատիւլ ամենակարճ ուղղութիւնը: Քաղաքացիական պատերազմում հասարակ թվաբանութիւնն անբաւարար է լինում և հաճախ՝ սխալ: Ճանապարհը Ֆարիցիինից մինչև Նովոբրոսիյսկ կարող է շատ ավելի յերկար լինել, վորովհետև նա անցնում է դասակարգային թշնամական միջավայրով: Յեւ ընդհակառակը, ճանապարհը Տուլայից մինչև Նովոբրոսիյսկ կարող է շատ ավելի կարճ լինել, վորովհետև նա անցնում է բանալորական Սարկովի վրայով, շախտորական Դոնբասի վրայով: Ուղղութիւնները այս գնահատականում արտահայտվեցին ընկեր Ստալինի՝ վորպես պրոլետարական հեղափոխականի, վորպես քաղաքացիական պատերազմի իսկական ստրատեգի հիմնական հատկութիւնները:

Ստալինի պլանն ընդունվեց կենտրոնական կոմիտեյի կողմից: Լենինն ինքն իր սեփական ձեռքով դաշտային շտաբին հրամանադրեց ինքնին վերացված դիրեկտիւլի անմիջական փոփոխման մասին: Հարապային Ֆրոնտի կողմից գլխավոր հարվածը հասցվեց Սարկով—Դոնբաս—Ռոստով ուղղութեամբ: Հետևանքները հայտնի չեն. քաղաքացիական պատերազմի մեջ բեկումը ձեռք բերվեց: Դենիկինյան հրոսակախմբերը շուտ արվեցին Սև ծովը: Ուկրաինան ու Հյուսիսային Կովկասն ազատված են սպիտակ-գաղափարականներից: Այս ամենի մեջ ընկեր Ստալինը խոշոր յերախտիք ունի:

Հարկավոր է կանգ առնել պատմական մի կարևորագույն մոմենտի վրա ևս, վորը հարապային Ֆրոնտում կապված է ընկեր Ստալինի անվան հետ: Յես նկատի ունեմ Հեծյալ բանակը կազ-

մելը: Սա առաջին փորձն էր հեծերազորի դիվիզիաները մի այնպիսի խոշոր միավորման մեջ խմբելու, վորպիսին բանակն է: Ստալինը տեսել էր հեծյալ մասսաների հզորութիւնը քաղաքացիական պատերազմում: Նա կոնկրետ կերպով հասկանում էր նրանց հրակայական նշանակութիւնը ավերիչ մասնելի համար: Սակայն անցյալում վոչ վոք այդպիսի յուրորինակ փորձ չուներ, ինչպիսին հեծյալ բանակների գործողութիւնն էր: Այս մասին դրված չէր նաև դիտական աշխատասիրութիւնները մեջ, ուստի և այսպիսի միջոցառումը կա՛մ տարակուսանք, կա՛մ ուղղակի դիմադրութիւն էր առաջ բերում: Սակայն Ստալինն այնպիսին չէր. քանի վոր նա հավատացած էր իր պլանների ոգտակարութեանն ու ճշտութեանը, նա դրանց իրագործման մեջ միշտ անշեղորեն էր ընթանում: Յեւ նոյեմբերի 11-ին Հանրապետութեան ՌԶԽ-ը հարապային Ֆրոնտի ՌԶԽ-ից ստանում է հետևյալ հաղորդագրութիւնը.

«Հանրապետութեան Ռազմհեղխորհրդին:

Հարապային Ֆրոնտի Ռազմհեղխորհրդը ս.թ. նոյեմբերի 11-ի իր նիստում, յեղնելով ներկա իրադրութեան պայմաններից, վորոշեց կազմել Հեծյալ բանակ՝ 1-ին և 2-րդ հեծյալ կորպուսների և մի հրաձիգ բրիգադայի (հետագայում ավելացնել նաև յերկրորդ բրիգադան) կազմով:

Հեծյալ բանակի Ռազմհեղխորհրդի կազմը. բանակի հրամանատար՝ ընկ. Բուդյոննի և անդամներ՝ ընկ. ընկ. Վորոշիլով և Շչադենկո:

Տեղեկանք. Հարապային Ֆրոնտի Ռազմհեղխորհրդի 1919 թ. նոյեմբերի 11-ի № 505-ա վորոշումը:

Վերոհիշյալը խնդրում ենք հաստատել»:

Հեծյալ բանակն ստեղծված էր, չնայելով և նույնիսկ ընդդեմ կենտրոնի ցանկութեան: Նրա ստեղծման ինիցիատիւան պատկանում է ընկեր Ստալինին, վորը նման կազմակերպութեան ամբողջ անհրաժեշտութիւնը միանգամայն պարզ էր պատկերացնում իր համար: Այս քայլի պատմական հետևանքները լավ հայտնի չեն ամենքին:

Ընկեր Ստալինի մի բնորոշ առանձնահատկութիւնը ևս դրսևորվեց հարապային Ֆրոնտում միանգամայն հստակ կերպով.—գործել հարվածող իմբավորումներով. ընտրելով գլխավոր ուղղութիւնները, կենտրոնացնել նրանց վրա լավագույն զորամասերը և հարվածել թշնամուն: Այս հարակցութեամբ, ինչպես նաև ուղղութեան ընտրութեան մեջ նա հասավ մեծ հմտութեան:

Դենիկինին ջախջախելուց հետո Ստալինի հեղինակութունը՝ վորպես առաջնակարգ կազմակերպչի ու ռազմական առաջնորդի դառնում է անառարկելի: Յերբ 1920 թ. հունվարին Ռոստովի մոտ շնորհիվ Ֆրոնտի հրամանատարութան կողմից սխալների վրա յե հասնում մեր հարձակման վտանգավոր կասեցում, յերբ նորից աճում է այն սպառնալիքը, թե շտեյնախմ սպիտակ-զվարդիականները կարող են ի չիք դարձնել մեր հաղթանակի պտուղները, Կենտրոնական կոմիտեն հետևյալ հեռագրերն է ուղարկում Ստալինին.

«Կովկասյան Ֆրոնտում հրամանատարութան իսկական միասնականութուն սահմանելու, Ֆրոնտի հրամանատարի և բանակի հրամանատարի հեղինակութունը պահպանելու, տեղական ուժերն ու միջոցները լայն չափով ողտադործելու անհրաժեշտութան նկատառումով ԿԿ-ի Բաղբյուրոն անպայմանորեն անհրաժեշտ դատվ անհասպող մտցնել Ձեզ կովկասյան Ֆրոնտի Ռազմ-հեղխորհրդի կազմի մեջ... Հաղորդեցեք, թե յերբ եք մեկնում Ռոստով»:

Ընկեր Ստալինը յենթարկվում է, թեկուզ և յենթադրում է, վոր առողջական դրության տեսակետից իրեն չպեժք է շարժել տեղից: Ապա նրան շատ է անհանգստացնում, վոր այս մշտական փոխաձգութունները կարող են սխալ հատկացվել տեղական կուսակցական կազմակերպութունների կողմից, վորոնք հակված կլինեն «մեղադրելու ինձ կառավարման մի բնազավառից մյուսը թեթևամտորեն ցատկելու մեջ, ԿԿ-ի վորոշումներին իրենց անիրագեկ լինելու պատճառով»¹: ԿԿ-ն համաձայնում է ընկեր Ստալինի հետ, և Լենինը փետրվարի 10-ին հեռագրում է նրան. «Յես հույսս չեմ կորցնում, վոր... ամբողջ գործը կկարգավորվի առանց ձեր տեղափոխության»:

Յերբ Վրանդելը սպիտակ-լեհական կամպանիայի աղմուկի տակ Ղրիմից դուրս է սողում և մի նոր սարսափելի սպառնալիք է ստեղծում ազատագրված Դոնբասի ու ամբողջ հարավի համար, Կենտրոնական կոմիտեն հետևյալ վորոշումն է հանում (1920 թ. օգոստոսի 3-ին).

«Վրանդելի հաջողության և Կուբանում տիրող տազնապի հետևանքով անհրաժեշտ է վրանդելյան Ֆրոնտը ճանաչել իբրև հսկայական, միանգամայն ինքնուրույն նշանակութուն ունեցող Ֆրոնտ, առանձնացնելով այն վորպես ինքնուրույն Ֆրոնտ: Հանձ-

¹ Ընկեր Ստալինի 1920 թ. փետրվարի 7-ի հեռագրերը:

նարարել ընկեր Ստալինին կազմել Ռազմ-հեղխորհուրդ, իր ուժերն ամբողջովին կենտրոնացնել վրանդելյան Ֆրոնտի վրա, վորպես Ֆրոնտի հրամանատար—Յեզորովին կամ Ֆրունզեյին, ըստ Գրյուկովի համաձայնության Ստալինի հետ»:

Հենց նույն օրը Լենինը գրում է Ստալինին.

«Բաղբյուրոյում հենց նոր անցկացրինք Ֆրոնտների բաժանումը, վորպեսզի դուք բացառապես զբաղվեք Վրանդելով...»:

Ընկեր Ստալինը կազմակերպում է նոր Ֆրոնտը, և միայն հիվանդութունն է ազատում նրան այդ աշխատանքից:

Սպիտակ-լեհական կամպանիայի ժամանակ ընկեր Ստալինը հարավ-արևմտյան Ֆրոնտի Ռ-20-ի անդամ է: Լեհական բանակների ջախջախումը, Կիևի և Աջափնյա Ուկրաինայի ազատագրումը, Գալիցիա խորը մուտք դործելը, և Հեծյալ բանակի—Ստալինի զավակի—նշանավոր ռեյդի կազմակերպումը նշանակալից չափով կազմում են նրա կարող և հմուտ ղեկավարության արդյունքները:

Ամբողջ լեհական Ֆրոնտի ջախջախումը Ուկրաինայում և III լեհական բանակի գրեթե լիովին վոչնչացումը Կիևի տակ, Բերդիչևիին ու ժիտոմիրին հասցրած կործանիչ հարվածները և և Հեծյալ բանակի շարժումը ուվենյան ուղղությամբ ստեղծեցին մի իրադրութուն, վորը մեր արևմտյան Ֆրոնտին ևս թուլյատրեց անցնել ընդհանուր հարձակման: Հարավ-արևմտյան Ֆրոնտի հետագա դործողութունները կարմիր զորքերին բերում—հասցնում են հենց Լվովի տակ: Յեվ միայն վարչապալի տակ մեր զորքերի կրած անհաջողութունն է խանդարում Հեծյալ բանակին, վորը պատրաստվել էր գրոհելու Լվովի վրա և գտնվում էր նրանից 10 կմ. հեռու:

Սակայն այս ժամանակաշրջանն այնքան հարուստ է զեպքերով, և նրա լուսարանումը կարիք ունի այնպիսի ընդարձակ դուկումենտացիայի ու ջանադիր վերլուծության, վոր մեր հոգիվածի սահմաններից շատ հեռու յե անցնում:

Ընկեր Ստալինի ռազմական աշխատանքի այս հակիրճ նկարագրությամբ չի սպասվում ռազմական առաջնորդի և պրոլետարական հեղափոխականի նրա հիմնական հատկութունների նույնիսկ բնութագիրը: Ամենից ավելի աչքի ընկնողը—դա ընկեր Ստալինի կարողանալն է՝ արագորեն բաբունել կոնկրետ իրադրութունը և նրա համեմատ գործել: Լինելով թափթիվածության, անկարգապահության ու պարտիզանության ամենախիստ թշնամի, ընկեր Ստալինն այնտեղ, վորտեղ հեղափոխության շահերն այդ պահանջում էյին, յերբեք չէր վարանում իր վրա վերցնել ծայրա-

հեղ միջոցների, ռադիկալ կերպով ջարդելու պատասխանատու-
թյունը. այնտեղ, վորտեղ այդ բանը պահանջում էր հեղափոխա-
կան իրադրությունը, ընկեր Ստալինը պատրաստ էր հակառակ
զնայ ամեն տեսակ կանոնադրությունների, ամեն տեսակ յե-
թակարգություն:

Ընկեր Ստալինը միշտ կողմնակից է յեղել ռազմական ամե-
նախիստ կարգապահություն ու կենտրոնացման, սակայն մի ան-
հրաժեշտ պայմանով, վոր ռազմական բարձրագույն որդանների
կողմից կառավարելը լինի խելամտորեն ու տոկուն կերպով: 1919
թվի հունվարի 31-ին Պաշտպանություն խորհրդին տված վերո-
հիշյալ տեղեկագրի մեջ ընկեր Ստալինը Ձերժինսկու հետ միասին
գրում է.

«Բանակը չի կարող գործել վորպես ինքնաբավ, լիովին ավ-
տոնոմ մի միավոր. իր գործողությունների մեջ նա ամբողջովին
կախված է իր հարևան բանակներից և ամենից առաջ՝ Հանրա-
պետություն Ռազմհեղխորհրդի գերեկտիվներից. ամենամարտու-
նակ բանակը մյուս հավասար պայմանների առկայությունը դեպ-
քում կարող է կրախի մատնվել կենտրոնի գերեկտիվների ան-
ճշտություն և հարևան բանակների հետ ունենալիք իրական կոն-
տակտի բացակայությունը դեպքում: Անհրաժեշտ է Ֆրոնտներում,
ամենից առաջ արևելյան Ֆրոնտում, վորոշակի լրջորեն մտած-
ված սարատեղիական գերեկտիվի իրագործման շուրջը սահմանել
առանձին բանակների գործողությունների խիստ կենտրոնացման
ուժեղ: Դիրեկտիվներ վորոշելու գործում կամայականությունը
կամ անխոհեմությունը, առանց բոլոր տվյալների լուրջ հաշվառ-
ման, և սրանից բխող՝ գերեկտիվների արագ կերպով փոխումը,
ինչպես նաև հենց գերեկտիվների անորոշությունը, ինչպես այդ
թույլատրում է Հանրապետություն Ռազմհեղխումը, բացառում է
բանակները ղեկավարելու հնարավորությունը, տանում է դեպի
ուժերի և ժամանակի վատնում, կարգալուծում է Ֆրոնտը»:

Ընկեր Ստալինը միշտ պնդում էր հանձնարարված գործի
համար կրելիք անձնական պատասխանատվության վրա և Ֆիզի-
կապես չէր տանում «գերատեսչական շերտամեջությունը»:

Ընկեր Ստալինը հսկայական ուշադրություն էր նվիրում
գործերի հայթայթումը կազմակերպելուն: Նա իմանում և հաս-
կանում էր, թե մարտիկի համար ինչ է նշանակում լավ սնունդը
և տաք հագուստը: Թե՛ Յարիցինում, թե՛ Պերմում, թե՛ հարավա-
յին Ֆրոնտում նա վոչ մի բանի առաջ կանգ չէր առնում, վոր-

պեսզի հայթայթի գործերին և դրանով նրանց էլ ավելի ուժեղ
ու դիմացկուն դարձնի:

Ընկեր Ստալինի մեջ մենք տեսնում ենք պրոլետարական դա-
սակարգային Ֆրոնտի կազմակերպչի տիպիկ դժերը: Նա հատուկ
ուշադրություն է նվիրում բանակի դասակարգային համարմանը,
վորպեսզի նրանում իրոք մնան «ուրիշի աշխատանքը չհահագոր-
ծող» բանվորներն ու գյուղացիները: Նա հսկայական նշանակու-
թյուն էր վերագրում քաղաշխատանքի ծավալմանը բանակում և
շատ անգամ է հանդիսացել կոմունիստների մոբիլիզացիայի նա-
խաձեռնող, անհրաժեշտ համարելով, վորպեսզի նրանց նշանակա-
լից տոկոսն ուղարկվի վորպես շարքային մարտիկ: Ընկեր Ստա-
լինը շատ պահանջկոտ էր ռազմկոմներ ջոկելու գործում: Նա
խիստ կերպով քննադատում էր այն ժամանակավա Ռազմական
կոմիսարների համառուսական բյուրոյին՝ «լակոտներ» ուղարկե-
լու համար: Նա ասում էր.

«Ռազմկոմները պետք է լինեն ռազմական գործի հողին, վոր
իր հետեից տանում է մասնազետներին»:

Ընկեր Ստալինը հսկայական նշանակություն էր տալիս բա-
նակային թիկունքի քաղաքական գրությունը: III բանակի վերա-
բերյալ տեղեկագրի մեջ նա գրում է.

«Մեր բանակների հիվանդոտ կողմը թիկունքի անկայունու-
թյունն է, վորը բացատրվում է, զլխավորապես, կուսակցական
աշխատանքի լքվածությամբ, կենտրոնի գերեկտիվները կենսա-
գործելու նկատմամբ սովորականների ցուցաբերած անկարողությամբ,
տեղական արտադարձ հանձնաժողովների բացառիկ, գրեթե մե-
կուսացված, գրությունը»:

Ընկեր Ստալինը բացառիկ կերպով խիստ էր դեպի մարդ-
կանց ընտրանքը: Անկախ պաշտոնից, իրոք «ուշադրություն
չդարձնելով անձերին», նա ամենախիստ կերպով հեռացնում էր
անպետք մասնազետներին, կոմիսարներին, կուսակցական ու
խորհրդային աշխատողներին: Սակայն միևնույն ժամանակ ընկեր
Ստալինը, ինչպես վոչ վոր, միշտ ոգնում ու պաշտպանում էր
նրանց, ովքեր, նրա կարծիքով, արդարացնում էին հեղափո-
խություն կողմից իրենց ցույց տրված վատահունությունը: Այսպես
էր վարվում ընկեր Ստալինը անձամբ իրեն հայտնի վատակալոր
կարմիր հրամանատարների վերաբերմամբ: Յերբ քաղաքացիական
պատերազմի իսկական պրոլետարական հերոսներից մեկը՝ հետա-

1 Հեռագիր Յարիցինից, 1918 թ.:

գալու՞մ 14-րդ հեծյալ զելվիդիայի հրամանատար ընկ. Պարխոմեն-
կոն, սպանված մախնովյան բանդաների հետ ունեցած կռվում,
1920 թ. սկզբներին թյուրիմացութեամբ դատապարտված էր
պատժի զերազույն չափին, ընկեր Ստալինը, իմանալով այդ մա-
սին, պահանջեց անհատապես և անառարկելի կերպով ազատ արձա-
կել նրան: Այսպիսի և սրան նման փաստեր կարելի չեն բերել
մեծ քանակութեամբ: Ընկեր Ստալինը, ինչպես մեծ մարդկանցից
վոչ մեկը, կարողանում էր խորը գնահատել այն աշխատողներին,
վորոնք իրենց կյանքը տալիս էին պրոլետարական հեղափոխու-
թյանը, և այս բանը զիտեյին հրամանատարները, զիտեյին բո-
լոր նրանք, ում վիճակվում էր նրա ղեկավարութեամբ կռվի
մղել հանուն մեր գործի:

Այսպիսին էր ընկեր Ստալինը քաղաքացիական պատերազ-
մում: Այսպիսին նա մնում է հանուն սոցիալիզմի մղվող պայքարի
նաև հետագա տարիների ընթացքում:

Քաղաքացիական պատերազմն ընկեր Ստալինից պահանջում
էր ուժերի, յեռանդի, կամքի և մտքի հսկայական լարում: Նա
իրեն նվիրում էր ամբողջովին ու անբաժանելիորեն: Սակայն
միևնույն ժամանակ նա այդ պատերազմից հսկայական փորձ
ձեռք բերեց իր հետագա աշխատանքի համար:

Քաղաքացիական պատերազմում ընկեր Ստալինը զանազան ու
ամենաբարդ պայմաններում, ունենալով հեղափոխական սորա-
տեղի հսկայական տաղանդ, միշտ էլ ճշտորեն սահմանում էր
զլխալոր հարվածի հիմնական ուղղութիւնները և, վարպետորեն
գործադրելով իրադրութեանը համապատասխանող տակտիկական
յեղանակները, հասնում էր ցանկալի հետևանքների: Պրոլետարա-
կան ստրատեգիա ու տակտիկա այս հատկութեանը նրանում մնաց
նաև քաղաքացիական պատերազմից հետո: Նրա այս հատկու-
թյունը լավ հայտնի յե ամբողջ կուսակցութեանը: Այս մասին
ամենքից լավ կարող էյին պատմել Տրոցկիներն ու նրանց նմաննե-
րը, վորոնք Մարքսի—Լենինի մեծ ուսմունքը իրենց մանր-բուր-
ժուական իրենդիվիդուալ նենդափոխելու փորձի համար իրենց
կողերով հատուցեցին: Պակաս լավ չգիտեն այդ մասին նաև աջ
սպորտունիստները, վորոնք վաղուց չե վոր լիակատար կերպով
ջախջախվեցին:

Ընկեր Ստալինը խաղաղ պայմաններում ևս մշտապես լենի-
նյան կէ-ի հետ մեկտեղ, վոչ պակաս հաջողութեամբ, քան քա-
ղաքացիական կռվում, անխնա պատերազմ է մղում կուսակցու-

թյան և մեր յերկրում սոցիալիզմի շինարարութեան բոլոր կամա
և ակամա թշնամիների դեմ:

Սակայն միևնույն ժամանակ, վաղուց դադարելով ձևականո-
րեն զինվորական լինելուց, ընկեր Ստալինը յերբեք չի դադարել
խորապես դրադվել պրոլետարական պետութեան պաշտպանութեան
հարցերով: Նա այժմ ևս, ինչպես նախկին տարիներում, զիտե
կարմիր բանակը և հանդիսանում է նրա ամենամոտ և թանգազին
բարեկամը:



Փարզմ. Ա. Տ.-Միրոյան
Թարգմանութիւնը խմբագրեց Վ. Գուրգենյան
Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրէչ Վ. Ջիդեջյան
Կոնտրոլ սրբագրէչ Լ. Արովյան

Գլավիտի լիազոր № Կ-3259, հրատ. № 535

Պատվեր № 15, տիրաժ 20.000

Թղթի չափսը $62 \times 94 \frac{1}{16}$ (38,400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

2 տպ. մամուլ 1 թերթ թուղթ

Հանձնված է արտադրութեան 31/I 1938 թ.

Ստորագրված է տպագրելու 9/II 1938 թ.

Գինը 30 Կ.

Հայկուհրատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71